

ԵՐԲ ԴՈՒ ԾԱՆՐԱԲԵՌՎԱԾ ԵՍ

«Ով Տեր տազնապ ունեն, օգնիր ինձ:» Եսայիա 38:14

«...Գարբիել հրեշտակն Աստծու կողմից ուղարկվեց...մի կույսի մոտ, որ նշանված էր մի մարդու հետ, անունը՝ Հովսեփ...և այն կույսի անունը Մարիամ էր: Հրեշտակը, նրա մոտ գալով, ասաց. Ողջո՛ւյն քեզ, ո՛վ շնորհընկալ, Տերը քեզ հետ է, օրհնյալ ես դու կանանց մեջ: Մարիամը, տեսնելով հրեշտակին, նրա խոսքերի վրա շփոթվեց ու ինքն իր ներսում մտածում էր, թե այս ողջունն ի՛նչ պիտի լինի: Եվ հրեշտակը նրան ասաց. Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, որովհետև Աստծուց շնորհ ստացար:»

Ղուկաս 1:26-30

1. Անտեսել իրավիճակը վերահսկելու իմ ցանկությունը

«Մարիամը հրեշտակին ասաց. Այդ ինչպե՞ս կլինի. չէ՞ որ ես դեռ այր չգիտեմ: Հրեշտակը պատասխանեց նրան... Աստծու մոտ ոչ մի բան անկարելի չէ:»

Ղուկաս 1:34, 37

«Մարիամն էլ ասաց. Ահա Տիրոջ աղախինն եմ. թող ինձ քո խոսքի պես լինի:» Ղուկաս 1:38

«Տիրոջը ապավինիք քո բոլոր սրտովը, և քո հասկացողությանը մի՛ վստահիր:» Առակաց 3:5

«Տերը կկատարի ինձ տեղ:» Սաղմոս 138:8

Աստծո ծրագիրը

- Հաճախ ավելի մեծ է քո ծրագրից
- Հաճախ ավելի ցավոտ է
- Միշտ ավելի լավն է

2. Թույլ տալ ուրիշները ինձ օգնեն

«Մարիամն այդ օրերին վեր կացավ, շտապ լեռնակողմը գնաց, Հուդայի քաղաքը: Եվ Ջաքարիայի տունը մտավ ու Եղիսաբեթին բարևեց:» Ղուկ. 1:38-40

«Երկուսը լավ է քան թե մեկը... էթե վայր ընկնեն, մեկը միյուսին վեր կկացնի. բայց վա յ մեկին որ ընկնի, և մի երկրորդ չկա որ նրան կանգնեցնի:» Ժողովող 4:9-10

«Իրար բեռը վերցրեք և այսպես քրիստոսի օրենքը կատարեցեք:» Գաղատացիս 6:2

3. Թույլ տուր, որ Աստված քեզ գորություն տա

«Երանի նրան, ով հավատաց, որովհետև կկատարվեն այն բաները, որոնք Տիրոջ կողմից ասվել են իրեն:»

Ղուկաս 1:45

«Երբոր ջրերից անցնես, ես քեզ հետ եմ, և եթե գետերովը՝ նրանք քեզ չեն ողողիլ. երբոր գնաս կրակի միջովը, չես այրվի, և բոցը քեզ պիտի չվառի:» Եսայիա 43:2

Որտեղ գտնել ուժը

- Գովաբանելով Աստծուն Իր բարության համար

«Մարիամն ասաց. Թող իմ անձը Տիրոջը փառավորի: Իմ հոգին ուրախացավ իմ Փրկիչ Աստծով:» Ղուկաս 1:46-47

- Մտածելով Աստծո խոսքի մասին

«Մարիամն այդ բոլոր բաները պահում էր և իր սրտում մտորում:» Ղուկաս 2:19

Վա յ ինձ, որովհետեւ նմանուեցի հնձի ժամանակ մնացած հասկերը հաւաքողի եւ այգեկութի ժամանակ ճռաքաղ անողի,...Սակայն ես Տիրոջը կսպասեմ, կհուսամ իմ փրկիչ Աստծուն, եւ իմ Տեր Աստուածը կը լսի ինձ: Միքիայ 7:1, 7